



[ՏՈՒՆ](#)
[ԼՐԱՀՈՍ](#)
[ՅՕԴՈՒԱԾՆԵՐ](#)
[ՀԱՐՑԱԶԳՐՈՅՑՆԵՐ](#)

[ԱՐՈՒԵՍ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ](#)
[ԱՅԼԱԶԱՆ](#)
[ԲԱՑԱՌԻԿ](#)

[ՎԵՐՋԻՆ >](#)
[August 10, 2018]
Հ.Յ.Դ. Ներկայացուց
SEARCH ...

HOME > TOP STORY > ՄԱ՛Մ, ԻՆՉՈ՞Ւ ԱՆՈՒՆՍ
 ՍԵԻԱԿ ԴՐԵՐ ԷՔ ... ԿԱՄ՝ ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ
 ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

ՄԱ՛Մ, ԻՆՉՈ՞Ւ ԱՆՈՒՆՍ ՍԵԻԱԿ ԴՐԵՐ ԷՔ ... ԿԱՄ՝ ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

🕒 August 9, 2018 📁 Top Story, Յօդուածներ 🗨️ 0





Սօսի Միշոյեան-Տապաղեան

-Մա՛մ, ինչո՞ւ անունս Սեւակ դրեր էք:

-Ինչո՞ւ կը դժգոհիս:


-Քանի որ դասարանը շարունակ «Սեւակ ուլիկ, սիրուն բալիկ», կ'ըսեն ինձի:

Ու թէեւ ան գիտէ, որ անունը բնական շարունակութիւնն է եղբօր անունն՝ Ռուբէնին, ու գիտէ մանաւանդ որ երկուքը միասին լրացումն են նշանաւոր բանաստեղծ-արձակագիր Ռուբէն Սեւակի անունն, սակայն դժգոհանքը յայտնելով կը շարունակէ.

-Բայց մա՛մ, թուրքերը սպանած են Ռուբէն Սեւակը, գոնէ Դաւիթ դնէիր:

Ութամեայ տղուս դժգոհութիւնը տեղին կը գտնեմ: Բնականաբար պարտուողի հոգեբանութեամբ չ'ուզեր համակուհիլ քաջարի տղաս: Կ'ուզէ որ անունը Դաւիթ ըլլար, նմանելու համար Սասունցի Դաւիթին: Մանաւանդ որ այս տարուան իր դասագիրքի ծրագիրին մէջ լայն տեղ յատկացուած էր դիւցազունին մանրապատումներուն ու

բնականաբար ներշնչուած անոր
հերոսութենէն ան սուրէ խաղալիքը կը քաշէր
պատեանէն ու կը գոչէր. «Ես պիտ մեծնամ
թուրքերը ջարդեմ»:




Ջանք կը թափեմ համոզելու համար, թէ
հակառակ դաժան ճակատագիրին որ
ենթարկուեցաւ Ռուբէն Սեւակը, սակայն
երբեք գէշ զգալու պատճառ մը չունի ինք,
ընդհակառակը՝ պարծանք զգալու է որ
աստուածային շնորհքներով օժտուած
անձնաւորութեան մը անունը կը կրէ, որ այո՛,
թուրքի ոճիրին զոհը դարձաւ, սակայն երբեք
այո՛ մէկը իր արժէքը չնուաստացուց ու մինչ
օրս պատուով կը յիշուի իր անունը: Ու կը
բացատրեմ թէ Ռ. Սեւակ ո՛չ միայն գրող,
մտաւորական կամ ազգային գործիչ էր, այլ
նաեւ բժիշկ ու մեծ հայրենասէր: Վեր հանելով
անոր մարդկային արժէքները կը պատմեմ, թէ
ինչպէս տարագրութեան ճամբուն վրայ ան
բուժած էր զիրենք փոխադրող թուրք
կառապանի աղջկան, որ սիրահարած էր իրեն.
Եւ թէ ինչպէս թրքուհիին հայրը առաջարկած
էր Ռ. Սեւակին որ ամուսնութիւն կնքէ իր
դստեր հետ եւ դառնալով կրօնափոխ
ազատէր, որովհետեւ հակառակ պարագային
իր ընկերներուն հետ պիտի դատապարտուէր
մահուան, սակայն Ռուբէն Սեւակի

մերժողական պատասխանը շատ կտրուկ
եղած էր ու ան հաւատարիմ մնացած էր իր
սիրոյն, ընտանիքին ու հաւատքին:



-Տե՛ս թէ ինչպէս
անունը մինչեւ
այսօր կը յիշուի
հպարտութեամբ,-
կ'ըսեմ Սեւակիս
ու կը շեշտեմ,-
դուն ալ կրնաս
իր անունը
արժեւորել քու



յաջողութիւններով:

Ան խօսքս կտրելով կ'աւելցնէ.

-Կը յիշե՞ս, մա՛մ, իր անունով փողոց ալ
տեսած էիք:

-Այո՛, կը հաւաստիացնեմ,- նոյնիսկ Երեւանի

մէջ դպրոց կայ իր անունով ու բանաստեղծին
կիսանդրին անոր դիմաց զետեղուած է:

Քիչ մը թեթեւցած հոգեկանով կը յիշեմ նաեւ որ
անցեալ օր Երեւանի պետական
համալսարանի բանասիրական
բաժանմունքին մէջ Ռուբէն Սեւակ անունով
լսարան մըն ալ տեսած էի եւ անմիջապէս
առձեռն հեռաձայնէս նկարը կը փնտռեմ ու
ցոյց կու տամ տղուս:

Գոհունակ ժպիտով մը կը նայի ինծի:
Համոզուած էր, թէ զիս հանգստացնել կը
փորձէր, չեմ գիտեր:

Տղուս այս հարցադրումը առիթ կ'ըլլայ նաեւ,
որ մենք՝ ընտանիքով որոշում կայացնենք
յաջորդող Կիրակի Էջմիածին մեկնիլ՝
այցելելու համար Մայր Տաճարին շրջակայքը
գտնուող Ռուբէն Սեւակին թանգարանը:***

Որոշեալ Կիրակին, ամբողջ ճամբու ընթացքին
մանչերուս կը պատմեմ «Բժիշկի գիրքէն
փրցուած էջեր»էն դրուագներ. կը շեշտեմ
մանաւանդ, թէ ինք բժիշկ ըլլալով հանդերձ,
միայն մարդոց մարմնական
հիւանդութիւնները չէր որ կը բժշկէր, այլ
անոնց հոգիներուն մէջ հաւատքն ու կամքը
կը զօրացնէր եւ հիւանդութիւնը
յաղթահարելու վստահութիւնը կը ներշնչէր:
Հաւատալով մանաւանդ որ «ապրիլը յաղթել
է», ան իր հիւանդները կը մղէր մահուան դէմ
պայքարի, որպէսզի չըլլայ որ յուսալքուին կամ
ընկճուին: Ու մայրական յորդորը
ինքնաբերաբար կը յաջորդէ պատումիս.
«Ռուք ալ կեանքի մէջ դժուարութիւններ
պիտի ունենաք, պիտի սխալիք, պիտի իյնաք,
սակայն երբեք չվախնաք, այլ միշտ կրկին

տրոսելով սր շտ յառաջ պրտր ըսթասաք»:
Ամուսինիս դէմքի ժպիտը նշմարելով, կը
հասկնամ որ նորէն «լեզուս բացուեր է...»: Ի
վերջոյ կը հասնինք թանգարան, որուն
պաշտօնական բացումը կատարուած էր 2013-
ի Սեպտեմբերին, հիմնադրութեամբ
նահատակ բանաստեղծին եղբօր գաւակ՝
Յովհաննէս Չիլինկիրեանի, որ նախապէս
Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ հիմնած էր
թանգարանը, սակայն միշտ ի միտի ունէր
գայն փոխադրել Հայաստան:

Թանգարանին մէջն են չորս սրահներու մէջ
ամփոփուած բանաստեղծին գրական
ժառանգութիւնը, նամակները:
Յուցապահարաններուն մէջ դրուած են իր
ծեռագիր տետրակները, լոյս տեսած գիրքերը,
նկարչական շնորհները: Անձնական իրերէն՝
պատի ժամացոյցը, իր գեղարուեստական
կտաւը, վկայականը, լուսանկարները, կնոջ
վերջին հեռագիրը՝ գրուած 21 Օգոստոս
1915ին. ուր կը կարդանք հետեւեալ տողերը.



*Շատ սիրելի Ռուբէնս, ահա կրկին շաբաթ մը
եւս քեզմէ առանց լուրի: Յուսամ թէ
հանգստիս ես սակայն: Եթէ երկու ամիս եւս
հեռու մնաս ինձմէ, թոքախտ պիտի ըլլամ,
այնքան որ յոգնած եմ: Լեւոնը շատ լաւ է,*

թուրքերէնը եւ գերմաներէնը շատ լաւ կը
խօսի հիմա եւ այնքան ուժեղ է, որ Շամիրամը
կը շալկէ արդէն: Այս վերջինը շատ յամառ է,
բայց շատ գեղեցիկ: Իրենք երկուքն ալ քու
աղուոր աչքերդ ունին: Մավրոբուլոսին հետ
կարգադրեցինք: Դուն գրեցի՞ր
Կեդրոնականին: Մայրս կը համբուրէ քեզ:
Մենք բոլորս ջերմ համբոյրներ կը դրկենք
քեզի:

Շատ գեղեցիկ բանաստեղծութիւններ կը
գրեմ եւ այնքան կը ցաւիմ, որ չես կրնար
թարգմանել:

Պզտիկները միշտ պարտէզն են: Կապրինք
այսպէս ու այնպէս: կը յուսամ քեզ վերստին
տեսնել. թող Աստուած այդ շնորհը ընէ՛ մեզի:
Միշտ պիտի սիրեմ քեզ, Աստուած ալ: Քու
Եաննիդ

Եաննիի այս վերջին քարտը՝ գրուած իր
ամուսնուն, վերադարձած է հետեւեալ
վերտառութեամբ. «Մեկնած է առանց հասցէ
ձգելու»:

Ինչքան հրապուրուած եմ Ռուբէնի
նամակներով: Մէկական գեղարուեստական
գոհարներ են, արուեստի գործեր՝ յորդած
ապրուած գեղուն զգացումներով: Ի՛նչ սէր կը
բուրեն այդ խօսքերը ուղղուած Եաննիին:
Իսկական սէր, որ ամէն խոչընդոտ
յաղթահարելէ ետք իրենց միացումով
պսակուեցաւ, որովհետեւ ազատութեան
տենչացող, աշխարհի պայմանական կարգ ու
կանոններէն, կեղծ ու պատիր օրէնքներէ վեր,
դէպի անձայրածիր հորիզոններ ձգտող
բանաստեղծի հոգին չէր կրնար հանդուրժել

‘Երոզթեսուդոմիստոսով խսկով սգիվսգե ոչ
վ ղվկուդուգ քորսննես մեգուկորուդ վոչքեսս

:ուդթեսստմուս ուովՆվոճուվ վոդու
րդ ուդթեսստուեու ուդիուուդսով սչուս մերստեք
տՆվր մոոկուդսուուսսս-քնգսոուուդ
:«...սգուվստ սուիսգ ուոճուր սոնգ մեգր
սս ‘մճուդի քնգի ոչսոսվոչսս ուդիուդուուսսս
ուսս ‘լոնոուդ ովսուու սս վոչսգր
ոչուգեսս սս վոչսգր ‘չննգոլ մի եքճե սս ‘սուուս
ոչսսս ուդիուդս ոչու նչնսսիսի լոչուս սգչվք
վճուեևսուր ‘նչսգչո սուիեսսս վսսկո ճոչսնս
ոչսս սս ‘նվոչուգիսսի հչր վոսկուր ովսուոք
...սլոնոսսսս սգուիուսնն ոչվեուրսսգճ
ուդթեսսսն ուոմ քորսսսսս սս վոսուուս
Նսոճուուդս ոչս վսսսսսս ոչս վսսսսսս
...սուս ոնո մր ճուսսսսսսս հվոչսսսսսս
ուոմ քորսսսսս սս վոսսսսս ...մճուդի
ոսսսսսսսսս քոնոսիսս սգր սոնգ մճուդի
սգր սգի վ չսսսսս սս ‘մճուդի ոչս վոչնոսսս
ոչսոուուրեքսս սս քնգի ոչուսսսսս
վոուուսսս սսս ուոչսսս ոչս
սս ոս ոչսս սս ‘ԵճՂ 24445 հչո ոչսուիուս
վսսսս սս ‘ուսսսսս սսսսս ու րգչ սս սգոչս
րգչ ոչ մեգուդսսի ոչսսսսս սս սսսսսս
րգչոչ ոչսսսսսսսսս ոչսսսսս
ճչր վոսսսսսսսսս «ուի մերսսսսսս
ննս վսսսսսս ուոչթեսսսսս ճչր ոչսսս
ուդիուոոկուդսուուսս սս ոչ-8061 ոսսսսս 8

:«ուվոչս, րիսս
սսսսս ոչսսսսս» ճոչու ուիսսսսսս
ուո ‘ոուսս ուոսսս րդ ուոչթեսսս
‘սսսսսսսսս սսսսսսսսս վչ ոչսսս
ոչսսսսսսսսս հվճսսսսսս ուոչսսսսս
:միչր նն ոչսսսսս ճոչսսսսս մի
ճչր ուոչթեսսսսսս «մեգուսսսսսս»

սակայն երբեք արգելքներուն դիմաց
ընկրկումով: Անոր սէրը միաձուլումն է հոգիի
եւ մարմնի. առողջ ու բնական սիրոյ
ջատագովն է ան, որ կարելի չէ բռնութեամբ
լուեցնել անոր ձայնը: «Երկեր» ժողովածոյին
մէջ (1955, էջ 229-230) կը կարդանք. «Ազատ
թողէք երկու սիրահարները, որ բնութեան
ձայնին հետեւին, ու պիտի տեսնէք, թէ ինչ
գեղեցիկ իրականութիւն է այդ
երեւակայութիւն կոչուածը: Հոգւոյն ու
մարմնին այնքան սեղմ ու փոխադարձ
ազդեցութիւնը մարդկային ոչ մէկ
գործողութեան ատեն կարելի է տեսնել:
Արուն եւ էգը, մարմինն ու հոգին իրար
խառնուելով՝ միանգամայն տիեզերքին ու
աստուածութեան կը խառնուին»: Ան
մարդկային գեղեցիկ զգացումներու
փառաբանիչն է:

Որքան կարճ ժամանակ ապրած է
բանաստեղծը, բայց որքան ուսումնասիրելիք
նիւթ կը հայթայթէ ան իր ապրած կեանքով ու
ծաւալած գործունէութեամբ.- Ռուբէն Սեւակը
որպէս գրող, որպէս ազգային եւ քաղաքական
գործիչ, որպէս մտաւորական, որպէս բժիշկ եւ
այլն: Հոն կ'իմանանք, որ թանգարանը
գիտահետազօտական բաժին բացած է եւ
այժմ արդէն իսկ ուսումնասիրութիւններ կը
կատարուին այդ գծով:

Մանչուկներս այս ընթացքին քանի մը
լուսանկար կը նկարուին հետո ու կը շրջին
թանգարանին մէջ՝ մէյ մը ծովանկարներուն
դիմաց կանգ առնելով, մէյ մը Ռ. Սեւակի
լուսանկարները դիտելով: Թանգարանին մէջ
գետեղուած են նաեւ գեղարուեստական
աժխանկարներ՝ թուով 130 կտաւ, մեծ մասամբ

ծովանկարներու. ոռոնամէ եռեօն

Յովհաննէս Այվազովսկիի
ստեղծագործութիւններէն են:

Կեանքով լեցուն եւ ապրելու
խանդավառութեամբ տոգորուած
բանաստեղծը կրնայ շատ բան չըսել
տակաւին մանչուկներուս, սակայն վստահ եմ
որ ժամանակը պիտի գայ, երբ անոնք պիտի
բանան իրենց համար ցարդ առեղծուածային
թուող այդ տուփը ու հոն գոհարներ գտնելով
միայն ու միայն հպարտութեամբ պիտի
համակուին: